Հովհաննես Թումանյան

Պոետին

Մեր ուշքն ինչո՞ւ ես կախարդում
Սիրո անհոգ երգերով,
Մեր աչքն ինչո՞ւ ես դու խաբում
Ցնորական պատկերով:

Այս օրերում հարկավոր չեն
Ջբոսանքներ հոգեկան,
Նայի՛ր կյանքին, մեզ կանչում են
Մեր եղբայրներն օգնության:

Իսկ դու, անփույթ մեր տանջանքին,

Հարվածներին մեր բախտի,
Արբեցնում ես արթուն հոգին
Քաղցրը թույնով հեշտախտի:

Քո սիրային երգերի հետ,
Նայի՛ր, սուգ ենք մենք անում.

Բավակա՛ն է, կանգնի՛ր, պոետ,
Կյանքի կռվի սահմանում:

Եվ տարածիր աչքդ անգենք
Ընդդեմ չարին մահաբեր,
Մենք էլ այնժամ քեզ հետ կասենք

«Մնաք բարյավ, կույս և սեր»:

1893